ԵՆԿ Հայաստան
Հիմնադրում. Դեկտեմբեր, 2008
Գրանցում. 22.09.2009
Հասցե. Շիրակացի 177 ա, բն. 2,
Գյումրի 3118, Հայաստան
Հեռ/Ֆաքս. + 374 312 4 94 97
Էլ-հասցե. yic_ngo@yahoo.com
Կայք. www.yic.info.am

ԵՆԿ Ծրագրային Հաշվետվություն

Մայիս 2009 – Դեկտեմբեր 2011

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոնը /ԵՆԿ/ երիտասարդական աշխատանքի բնագավառում փորձ ունեցող և այդ ոլորտում ճանաչված մի խումբ երիտասարդների կողմից հիմնադրված հասարակական կազմակերպություն է :

ԵՆԿ –ի առաքելությունը

Նպաստել երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ խրախուսելով երիտասարդական նախաձեռնություններն և ակտիվ մասնակցությունը:

ԵՆԿ-ի գործունեության ուղղությունները

- Կազմակերպել երիտասարդական քաղաքականության զարգացման և որոշումների կայացման գործընթացում երիտասարդների ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը խթանող արշավներ և միջոցառումներ,
- Հնարավորություն ընձեռնել իրականացնել տեղական և միջազգային կամավորական նախաձեռնություններ `խրախուսելով երիտասարդների փորձի փոխանակումը և ուժեղացնելով երիտասարդության դերը համայնքի զարգացման գործունեության մեջ,
- Ապահովել ինֆորմացիա, խորհրդատվություն, հնարավորություն ընձեռնել տեղական և միջազգային կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման դասընթացներին և փոխանակման ծրագրերին մասնակցելու համար, որոնք խթանում են միջսահմանային համագործակցությանը և միջմշակութային երկխոսությանը երիտասարդության միջև,

Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ

- Կազմակերպել երիտասարդների անձնային և մասնագիտական զարգացմանը ուղղված դասընթացներ հետևյալ թեմաներով՝ կարիերիայի զարգացում, կամավորություն, միջանձնային հաղորդակցություն, կոնֆլիկտների հաղթահարում,
- Կազմակերպել լեզվի և մշակութային ակումբներ՝ ուղղված երիտասարդների լեզվական և հաղորդակցական հմտությունների, գեղագիտական ճաշակի զարգացմանը:

- ԵՆԿ-ն հանդիսանում է Հայաստանում ՍԱԼՏՕ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի “Երիտասարդությունը Շարժման Մեջ” ծրագրի տեղեկատվական ներկայացուցիչների ցանցի անդամ:
- ԵՆԿ-ն հանդիասնում է Հայաստան-Թուրքիա “Առանց Սահմանների Նախաձեռնություն” ՀԿ պլատֆորմի անդամ:
- ԵՆԿ-ն հանդիասանում է “Միավորված Ազգերի Կազմակերպության” կողմից աջակցվող “Կամավոր Ընդգրկող Կազմակերպություններ”-ի ցանցի անդամ:

ԵՆԿ Թիմ

✓ Աշխատակազմ

ԵՆԿ նախագահ: Արթուր Նաջարյան

Էլ-փոստ: artur_najo@yahoo.com

Հեռ.: +374 93 95 93 07

Ծրագրային բաժնի ղեկավար: Նելլի Մինասյան

Էլ-փոստ: nelly.minasyan@gmail.com

Հեռ.: +374 98 85 83 07

Գրասենյակի ղեկավար: Լիանա Հակոբյան

Էլ-փոստ: lihakobyan@yahoo.com

Հեռ.: +374 98 83 86 50

Մարդկային ռեսուրսների

պատասխանատու: Անի Աղայան

Էլ-փոստ: aniaghayan@gmail.com

Հեռ.: +374 94 83 38 93

Ադմինիստրատիվ օգնական : Անի Դարբինյան

Էլ-փոստ:

anidarbinyan14@yahoo.com

Հեռ: +374 94 72 37 79

Ծրագրի ղեկավար: Գուգեն Բալասանյան

Էլ-փոստ: gurgenbalasanyan@yahoo.com

Հեռ.: +374 77 00 63 33

Ծրագրի ղեկավար: Սոնա Սահակյան

Էլ-փոստ: sahakyansona@yahoo.com

Հեռ.: +374 93 50 59 30

Ծրագրի ղեկավար: Ամալյա Ստեփանյան

Էլ-փոստ: amalyastepanyan@gmail.com

Հեռ.: +374 94 78 53 60

Ծրագրի ղեկավար: Վալյա Մարտիրոսյան

Էլ-փոստ: valya.martirosyan@gmail.com

Հեռ.: +374 93 23 13 85

Ակումբների համակարգող:

Թամարա Խլղաթյան

Էլ-փոստ: tamarakhlghatyan@yagoo.com

Հեռ.: +374 93 62 18 09

Ծրագրի ղեկավար: Տիգրանուհի Հակոբյան

Էլ-փոստ: tigranuhi.hakobyan@yahoo.com

Հեռ.: +374 91 76 23 37

✓ Միջազգային Խորհուրդ

Խորհրդի նախագահ: Աննա Եղոյան /Հայաստան/

Էլ-փոստ: ayeghoyan@yahoo.com

Հեռ.: +374 77 12 56 74

Խորհրդի անդամ : Մարիա Բրանտ /Լեհաստան/

Էլ-փոստ: maja.brand@gmail.com

Հեռ.: +486 04 27 26 39

Խորհրդի անդամ: Ժաննա Հարությունյան/ԱՄՆ/

Էլ-փոստ: zhannaharutyunyan@yahoo.com

Հեռ.: +374 91 77 06 34



Խորհրդի անդամ: Բուրչու Բեչերման /Թուրքիա /

Էլ-փոստ: burcu.bechermen@gmail.com

Հեռ.: +9053 27 82 82 65

Վերջին երկուս ու կես տարիների մեր գործունեությունը ամփոփելու համար մենք պատրաստել ենք հաշվետվություն՝ կետրոնանալով ծրագրային գործունեության և մարդկային ռեսուրսների կազմակերպման վրա:

Ակտիվ Քաղաքացիություն

✓ Կամավորական աշխատանքի խրախուսում

«Դու կարող ես» Մեդիա Ծրագիր

Սեպտեմբեր 2011-առ այսօր, Գյումրի / Հայաստան

"Դու կարող ես" մեդիա ծրագրի առաքելությունն է՝ նպաստել տեղական և միջազգային կամավորական աշխատանքի խրախուսմանը և ճանաչմանը: 2011թ. սեպտեմբերի սկզբին, մի խումբ երիտասարդներ (10 հոգի), համագործակցելով տեղական Ցայգ հեռուստաընկերության հետ, մասնակցեցին ԶԼՄ-ի վերաբերյալ մի շարք սեմինարների՝ հետևյալ թեմաներով ռեպորտաժներ պատրաստելու և եթեր հեռարձակելու համար.

- երիտասարդների քաղաքացիական ակտիվություն, այդ թվում ընձեռվող հնարավորությունները և դժվարությունները;
- կամավորության էությունը և կամավորությունը որպես երիտասարդների ակտիվ մասնակցությունը խթանող գործոն;
- կամավոր աշխատանքի ընկալումը տեղական համայնքի և մասնավորապես երիտասարդության կողմից;
- սոցիալ-մշակութային և իրավական սահմանափակումները, կամավորական աշխատանքին խոչընդոտող գործոնները, կամավորության խթանումը և ճանաչումը;
- կամավորության ազդեցությունը համայնքի խնդիրները լուծելու հարցում;
- կազմակերպված և չկազմակերպված տեղական և միջազգային կամավորի հնարավորությունները;
- քաղաքացիական հաստատությունների դերը երիտասարդների մասնկացությունը խթանելու գործում:

Առաջին հաղորդումը եթեր հեռարձակվեց 2011թ. հոկտեմբերի 9-ին: Ծրագրի ընթացքում կլինեն ևս 10 հաղորդումներ և նրանցից յուրաքանչյուրը բաղկացած կլինի երեք ռեպորտաժներից: Փետրվարի վերջերին ծրագիրը կմեկնարկի իր ավարտը: Ամեն մի նոր հաղորդում եթեր կհեռարձակվի յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ և կրկնությունը անգլերեն ենթատեքստով, իսկ հաղորդման միջին տևողությունը կլինի 30 րոպե: Այս ծրագիրը հետաքրքրություն առաջացրեց երիտասարդների և մեր անդամների մոտ, ովքեր ակտիվորեն հետևում են մեզ Youtube-ում և հեռուստատեսությամբ: Անգլերեն լեզվով ենթատեքստերի շնորհիվ ծրագիրը մատչելի է ոչ միայն տեղական հադիսատեսին:

«Կամավորությունը Տեսաֆիլմերով» երիտասարդական փառատոն

Հունիս - Օգոստոս 2010, Գյումրի – Երևան / Հայաստան

“Կամավորությունը տեսաֆիլմերով” առցանց մրցույթը տեղի ունեցավ Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոնի, Հայաստանի Հանրապետության երիտասարդության և սպորտի նախարարության պետական ոչ առևտրային կազմակերպության, ՄԱԿ-ի կամավորության ծրագրի, ՄԱԿ-ի Հանրային Տեղեկատվության Վարչության աջակցությամբ:

Այս ծրագրի հիմնական նպատակներն էին՝ խթանել կամավորությունը որպես քաղաքացիների ակտիվ մասնակցությունը ապահովող միջոց , ինչպես նաև խրախուսել ԶԼՄ-ների կիրառումը որպես հասարակության կարծիքն արտահայտող նորարար միջոց: Ծրագիրը կոչ արեց հայ անհատներին և կազմակերպություններին ոգեշնչվել և միմյանց օգնության ձեռք մեկնելով՝ ցույց տալ, թե ինչ են կարող անել ազգի ապագայի համար: Ըստ մեզ, այս հարցերը լուսաբանելու լավագույն միջոցն էր երիտասարդների կամավորության խնդրի վրա կետրոնացած՝ “Կամավորությունը Տեսաֆիլմերով” անվանումը կրող տեսահոլովակների առցանց մրցույթը: Մրցույթի նպատակն էր պարգևատրել երիտասարդի կողմից կամավորության խորագրով պատրաստած սիրողական տեսահոլովակները: Ծրագիրը նաև նպատակաուղղված էր երիտասարդների կողմից կամավորության ճանաչմանը, օգտագործելով մի միջոցր, որը հասանելի է կամավորության բնագավառում ներգրավված ներկա հադիսատեսին և ապագա ահառուներին, ովքեր և առնչվում են կամավորական աշխատանքին և օգուտ են քաղում դրանից:

«Աղքատությունը եվրոպական կամավորների աչքերով» շրջիկ ֆոտո-ցուցահանդես

Դեկտեմբեր 2010- Մարտ 2011, Գյումրի – Դիլիջան - Վարդենիս - Վանաձոր - Երևան - Գորիս - Ստեփանավան / Հայաստան



“Աղքատությունը Եվրոպական Կամավորների Աչքերով” շրջիկ ցուցահանդեսը անցկացվեց Կարողություն և Զարգացում հանուն Քաղաքացիական Հասարակության ՀԿ-ի Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոն ՀԿ-ի, Դիլիջանի Երիտասարդական Համագործակցության ՀԿ-ի, Միջմշակութային Հետազոտության, Ուսուցման և Երկխոսության ՀԿ-ի, և Հայաստանի Երիտասարդական Ակումբների դաշնության ՀԿ-ի համագործակցությամբ:,

Ցուցահանդեսի նպատակն էր կենտրոնացնել հայ բնակչության ուշադրությունը երկրի աղքատության և աղքատության նվազեցման վրա՝ օտարերկրացիների և, հատկապես Հայաստանում հյուրընկալվող ԵԿԾ կամավորների տեսակետից; Այն նաև նպատակաուղղված էր ընդգծելու ԵԿԾ ծրագրերի տեղական ազդեցությունը և հայ երիտասարդների ներգրավվածությունը ԵԿԾ-ում:

Լուսանկարները ցուցադրվեցին շրջիկ ցուցահանդեսի շրջանակներում մի քանի քաղաքներում, այդ թվում՝ Գյումրիում, Դիլիջանում, Վարդենիսում, Վանաձորում, Երևանում, Գորիսում, Ստեփանավանում, յուրաքանչյուր քաղաքում կանգ առնելով մոտավորապես մի շաբաթ:

«Աղբատությունը երոպական կամավորների աչքերով» շրջիկ ֆոտո-ցուցահանդես

Դեկտեմբեր 2010 - Մարտ 2011, Գյումրի – Դիլիջան - Վարդենիս - Վանաձոր - Երևան - Գորիս - Ստեփանավան / Հայաստան

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն, համագործակցելով Կարողություն և Զարգացում հանուն Քաղաքացիական Հասարակության ՀԿ-ի, Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոն ՀԿ-ի, Դիլիջանի Երիտասարդական Համագործակցության ՀԿ-ի, Միջմշակութային Հետազոտության, Ուսուցման և Երկխոսության ՀԿ-ի, և Հայաստանի Երիտասարդական Ակումբների Դաշնություն ՀԿ-ի հետ իրականացրեց "Եվրոպան Հայ Կամավորների Աչքերով" շրջիկ ֆոտո-ցուցահանդեսը:



Ցուցահանդեսի նպատակն էր բացահայտել հայ կամավորների պատկերացումները Եվրոպայի վերաբերյալ, որոնք նրանք ձեռք են բերել Եվրոպայում կամավորական աշխատանք իրականացնելիս՝ կենտրոնանալով եվրոպական այնպիսի որակների վրա, ինչպիսիք են մասնակցությունը և բազմամշակութային գործունեությունը: Ծրագրի նպատակն էր նաև ընդգծել ԵԿԾ ծրագրերի տեղական ազդեցությունը և միաժամանակ խթանել կամավորությունը: Ցուցահանդեսի գաղափարը առաջադրվել էր ԵՆԿ-ի կողմից և այն արժանացավ Եվրոպական Հանձնաժողովի "Երիտասարդությունը Շարժման մեջ" ծրագրի հայ բազմապատկողների ցանցի և ԵԿԾ բնագավառում փորձ ունեցած այլ կազմակերպությունների և ընդհանրապես «Երիտասարդությունը Շարժման մեջ» ծրագրի աջակցությանը:

Ցուցահանդեսի ձևաչափն էր.

- Շրջիկ ֆոտո-ցուցահանդես մի շաբաթյա հանգրվաններով Գյումրիում, Երևանում, Վանաձորում, Ստեփանավանում, Դիլիջանում և Գորիսում,
- Ցուցահանդեսի հետ համատեղ իրականցվում էր նաև խրախուսման գործունեություն, օրինակ՝ ԵԿԾ շնորհանդեսները, նախկին ԵԿԾ կամավորի պատմությունները և այլն,

- www.rhiz.eu. Կայքում ԵՆԿ-ի մշակութային բլոգում տեղադրված թվային/վիրտուալ ցուցահանդեսը խթանում է կամավորությունը տարբեր ուղիներով և այն պարբերաբար թարմացվում է նորանոր միջոցառումներով և լուսանկարներով : Այս պորտալը հասանելի է և Հայաստանի, և Եվրոպայի կամավորներին:

Ծրագիրը իրականացվեց ՍԱԼՏՕ Արևելյան Եվրոպա և Կովկաս Ռեսուրս կենտրոնի աջակցությամբ: Սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ ցուցահանդեսի բացումը: Ավելի ուշ լուսանկարները հյուրընկալվեցին Դիլիջանում, Ստեփանավանում, Գորիսում, Վանաձորում: Եզրափակիչ ցուցահանդեսը տեղի ունեցավ Գյումրիում: Ցուցահանդեսի համակարգումը իրականացվեց Գյումրիի ԵՆԿ ՀԿ-ի կողմից:

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոնը զբաղվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվով **«Երիտասարդությունը Շարժման մեջ»** ծրագրի շրջանակներում իրականացվող **«Եվրոպական Կամավորական Ծառայություն»** ծրագրով, որը հնարավորություն է ընձեռում հյուրընկալել եվրոպական կամավորների և արտասահման ուղղարկել հայ կամավորների տարաբնույթ գործունեություն իրականացնելու համար: Ստորև բերված են ԵԿԾ ծրագրերի որոշ օրինակներ, որոնք ԵՆկ ՀԿ-ն իրականացրել է 2010-2011թթ. ընթացքում:

Եվրոպական Կամավորական Ծառայություն

❖ Ուղղարկող

«Եվրոպական Մանկապարտեզ»

Հունվար 2010 – Հուլիս 2010, Լեհաստան

Ծրագրի տևողությունը. 6 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. "Երիտասարդների Ինտեգրման և Զարգացման Ասոցիացիա"

Ծրագրի վայրը. Կրակով, Լեհաստան

Կամավորի անունը. Թամարա Գրիգորյան

Կամավորի առաջադրանքները: մանկապարտեզում օգնել ուսուցիչներին և դաստիարակներին

«Մեզանից յուրաքանչյուրը տալիս է մեզանից մի մաս»

Սեպ. 2009 – Սեպ. 2010, Լեհաստա

Ծրագրի տևողությունը. 12 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն: "Towarzystwo Opieki nad Niepełnosprawnymi"

Ծրագրի վայրը. Ուստրոն, Լեհաստան

Կամավորի անունը. Մարիա Արուշանյան

Կամավորի առաջադրանքները. աջակցել Կենտրոնի հաշմանդամ երեխաներին

«Երիտասարդների նորամուծական կենտրոն հանուն գյուղական տարածքների կայուն զարգացման»

Փետրվար 2010 – Օգոստոս 2010, Բուլղարիա

Ծրագրի տևողությունը. 7 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Մշակութային ավանդական և կայուն զարգացում

Ծրագրի վայրը. Ռավնոգոր, Բուլղարիա

ԵԿԾ կամավոր: Արմինե Խաչատրյան

Կամավորի առաջադրանքները. Մանկատանը երեխաների համար կազմակերպել ինչպես ներսում , այնպես էլ դրսում անցկացվող գործողություններ, միջնակագ դպրոցում անգլերեն լեզվի դասավանդում , մասնակցել տեղական միջոցառումներին:

«Էվոսմոս երիտասարդական տեղեկատվական կենտրոն»

Մայիս 2010 – Նոյեմբեր 2010, Հունաստան

Ծրագրի տևողությունը. 6 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Էվոսմոս Երիտասարդական Տեղեկատվական Կենտրոն

Ծրագրի վայրը. Սալոնիկի, Հունաստան

ԵԿԾ կամավոր. Արթուր Նաջարյան

Կամավորի առաջադրանքները. Աջակցել աշխատակազմի անդամներին Էվոսմոսի Համայանքային Զարգացման Ասոցիացիայի միջոցառումները գովազդող տպագիր նյութերի պատրաստման հարցում, գրասենյակային պահպանման գործում, մասնակցել քարոզչական միջոցառումներին , որոնց նպատակն է իրազեկել տեղական երիտասարդներին կազմակերպության գործունեության վերաբերյալ , ինչպես նաև մասնակցել երիտասարդների համար նախատեսված ԵՄ ծրագրերին:

«Մեդիում մշակույթ»

Օգոստոս 2010 – Հուլիս 2011, Գերմանիա

Ծրագրի տևողությունը. 12 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Կուլտուր Ակտիվ

Ծրագրի վայր. Դրեզդեն, Գերմանիա

Կամավորի անունը. Մերի Չարուխչյան

Կամավորի առաջադրանքները. Օգնել հյուրընկալող կազմակերպությանը՝ տեղական և միջազգային գեղարվեստական միջոցառումների կազմակերպչական հարցերում:

«Մաքուր Երկինք + Մաքուր Անտառ + Մաքուր Ջուր = Առողջ Բնակիչներ»

Հոկտեմբեր 2010 – Հուլիս 2011, Ռումինիա

Ծրագրի տևողությունը. 12 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. ANMRF Louis Pasteur Dej BRAILA Branch

Ծրագրի վայրը: Բրաիլա, Ռումինիա

Կամավորի անունը. Արամ Պողոսյան

Կամավորի առաջադրանքները. իրականացնել բնապահպանական կրթական գործունեություն, օգտագործելով ոչ ֆորմալ մեթոդներ Բրաիլա համայնքի տեղական համայնքների երիտասարդների և երեխաների էկոլոգիական իրազեկությունը զարգացնելու համար:

«Անապահով երիտասարդների սոցիալական ինտեգրման սոցիալական հասարակության կենտրոն»

Հուլիս 2010 – Ապրիլ 2011, Ռումինիա

Ծրագրի տևողությունը. 11 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. ANMRF Louis Pasteur Dej BRAILA Branch

Ծրագրի վայրը. Braila, Ռումինիա

Կամավորի անունը. Լիանա Ջիլավյան

Կամավորի առաջադրանքները. Նախաձեռնելով գովազդային արշավ՝ տեղեկացնել անապահով երիտասարդներին եվրոպական հնարավորությունների մասին:

«Արևելք & Կենտրոնական & Արևմուտք – Ընդհանուր ԵԿԾ»

Օգոստոս- Դեկտեմբեր2010, Լեհաստան

Ծրագրի տևողությունը. 6 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Stowarzyszenie “U Siemachy”

Ծրագրի վայրը. Կրակով, Լեյհաստան

Կամավորի անունը. Թամարա Գրիգորյան

Կամավորի առաջադրանքները Աշխատել երեխաների և դեռահասների հետ. երաժշտություն, արվեստ, խաղեր, լեզվի դասընթացներ և այլն:

«Անիմացիա – Ստեղծագործում»

Մայիս 2011 – Հունվար 2012, Բելգիա

Ծրագրի տևողությունը : 8 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Miroir Vagabond

Ծրագրի վայրը. Բուրդոն, Բելգիա

Կամավորի անունը.Ամալյա Ստեփանյան

Կամավորի առաջադրանքները. Աշխատել փախստականների հետ, կազմակերպել լեզվի դասընթացներ, օգնել կազմակերպությանը ամենօրյա առաջադրանքների կատարման հարցում:

«ԵԿԾ-Կովկասի համար»

Օգոստոս 2011– Ապրել 2012, Լեհաստան

Ծրագրի տևողությունը. 9 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Կրթության և Ստեղծագործականության Հիմնադրամ

Ծրագրի վայրը. Բիալիստոք, Լեհաստան

Կամավորի անունը. Աննա Վանեցյան

Կամավորի առաջադրանքները.

Մանկապարտեզում աշխատել երեխաների հետ՝ կազմակերպել խաղեր, միջոցառումներ, մշակել դասի պլաններ և այլն:

«Կամավոր ծառայության օգնական»

Սեպտեմբեր 2011– Օգոստոս 2012, Նորվեգիա

Ծրագրի տևողությունը. 1 տարի

Հյուրընկալող կազմակերպություն. Fjaler Frivilligsentral

Ծրագրի վայրը. Դալե ի Սնֆյորդ, Նորվեգիա

Կամավորի անունը. Դավիթ Ասիլբեկյան

Կամավորի առաջադրանքները: Օգնել հյուրընկալող կազմակերպությանը կամավորական աշխատանքի համակարգման գործում, աջակցել կազմակերպությանը այնպիսի բնագավառներում , ինչպիսիք են մշակույթ և հանրային աշխատանք:

«Ցուցադրելով Եվրոպան. Ինչպես տեսագրել և ներկայացնել միջազգային և տեղական մշակութային ծրագրեր»

Հոկտեմբեր 2011– Սեպտեմբեր 2012 , Գերմանիա

Ծրագրի տևողությունը. 12 ամիս

Հյուրընկալող կազմակերպություն. Kultur Aktive.V

Ծրագրի վայրը. Դրեզդեն, Գերմանիա

Կամավորի անունը.Վալյա Մարտիրոսյան

Կամավորի առաջադրանքները. օգնել կազմակերպությանը կազմակերպել և հյուրընկալել տեղական և միջազգային արվեստագիտական միջոցառումներ:

❖ Հյուրընկալված Ծրագրեր

«Նոր ՀՈՒՅՍ երեխաների համար»

Հոկտեմբեր 2009 – Հուլիս2010, Գյումրի / Հայաստան

Ծրագրի համընդհանուր նպատակն էր աջակցել Գյումրու "ՀՈՒՅՍ"-ի երեխաներին: Ծրագիրն անմիջականորեն նպատակաուղղված էր, նաև ընդլայնելու տեղական երիտասարդների գիտելիքների շրջանակը եվրոպական քաղաքացիության և այլ մշակույթների վերաբերյալ:

Ծրագրի տևողությունը. 8 ամիս

Գործընկեր. Fundacja dla Wolności

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

ԵԿԾ կամավորներ. Լուկաշ Մացիեջուկ, Աննա Պարադովսկա

Կամավորի առաջադրանքները. Կազմակերպել ''ՀՈՒՅՍ''-ի երեխաների ազատ ժամանակը, վարել լեհական ակումբ ԵՆԿ անդամների համար, աջակցել ԵՆկ ընթացիկ ծրագրերին և ամենօրյա գործունեությանը:

«Իտալական ոգին Գյումրիում»

Նոյեմբեր 2009- Մարտ 2010, Գյումրի / Հայաստան

Ծրագրի գլխավոր նպատակն էր բարձրացնել եվրոպական իրազեկության մակարդակը և խթանել մշակութային փոխանակումը Գյումրի քաղաքում: Ծրագիրը պատասխան էր իտալական մշակույթի և լեզվի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրությանը, և, ընդհանրապես, անհրաժեշտություն էր մուտքը դեպի եվրոպական մշակույթ հեշտացնելու համար, հատկապես անապահով երիտասարդների համար:

Ծրագրի տևողությունը. 3 ամիս

Գործընկեր. AFSAI

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

ԵԿԾ կամավոր. Անդրեա Ֆիլիպպի

Կամավորի առաջադրանքները. վարել "Իտալական Ակումբ " ԵՆԿ անդամների համար, որը ներառում էր նաև լեզվի ակումբի կազմակերպում, աջակցություն Գյումրիի Հայկական Կարիտասին՝ նրա մասնակցած ծրագրերի ընթացքում լուսանկարներ նկարելով և որոշ ծրագրերի համար զեկույցներ պատրաստելով (մեծահասակների խնամքի կենտրոններ, մանկատներ, սոցիալական կենտրոններ և այլն):

«Մենք ապրում ենք ՀՈՒՅՍի հետ»

Հունիս 2010 – Մարտ 2011, Գյումրի / Հայաստան

Ծրագրի համընդհանուր նպատակն էր, Հույս մանկան կենտրոնի սաներին խրախուսել առողջ ապրելակերպ և նրանց ազատ ժամանակը դարձնել ավելի արդյունավետ կազմակերպելով արվեստի, մշակույթի և լեզվի դասընթացներ:

Ծրագրի տևողությունը. 9 ամիս

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

Կամավորներ. Կժիշտով Կարչևսկի, Մոնիկա Սույեվիչ

Կամավորների առաջադրանքները. Կազմակերպել Հույսի որբերի ազատ ժամանցը, կազմակերպել ծրագրեր նրանց կյանքը բարելավելու համար, աջակցել ԵՆԿ-ին զանազան երիտասարդական ակումբներ կազմակերպելու և անցկացնելու հարցերում:

«Մենք կարող ենք անել ավելին!!!»

Հոկտեմբեր 2010– Հունիս 2011, Գյումրի, Հայաստան

Ծրագրի նպատակն էր Գյումրու ցերեկային կենտրոնի սահմանափակ հնարավորություններով երեխաներին տրամադրել վերականգնողական կյանքի հմտությունների զարգացման հնարավորություններ և առավել կառուցողական դարձնել նրանց ազատ ժամանակը՝ կազմակերպելով արթ թերապիա, մշակութային և լեզվական աշխատանքներ:

Ծրագրի տևողությունը. 9 ամիս

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

Կամավորներ. Պիոտր Դուդանովիչ, Լուկաշ Սկոչիլաս

Կամավորների առաջադրանքները. Կազմակերպել կենտրոնի հաշմանդամ երեխաների ազատ ժամանցը, և նրանց համար կազմակերպել տարբեր ծրագրեր: Չնայած կամավորների հիմնական աշխատանքը հանդիսանում էր կենտրոնում տարաբնույթ գործունեություն իրականացնելուն, կամավորներն ակտիվորեն մասնակցում էին ԵՆԿ տեղական և միջազգային ծրագրերին:

«Գերմանական մշակույթը Գյումրիում»

Հունիս 2011- Նոյեմբեր 2011, Գյումրի / Հայաստան

Այս ծրագրի գլխավոր նպատակն էր, բարձրացնել եվրոպական իրազեկությունը և խթանել մշակութային փոխանակումը Գյումրի քաղաքում: Ծրագիրը նպատակաուղղված էր Հայաստանի երիտասարդության գիտելիքների մակարդակի բարձրացմանը եվրոպական քաղաքացիության վերաբերյալ:

Ծրագրի տևողությունը. 6 ամիս

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

Կամավորի անունը: Գրանիթ Բեռիշա

Կամավորի առաջաադրանքները. ԵՆԿ անդամների համար կազմակերպել գերմաներեն լեզվի և գերմանական մշակույթի ակումբներ,

Գյումրիի գերմանական դպրոցի աշակերտների համար պարբերաբար անցկացնել գերմաներեն լեզվի դասընթացներ և կազմակերպել գերմանական մշակույթը ներկայացնող միջոցառումներ:

Գրանիտը նաև վարում էր կրկեսայինն դասընթացներ Գյումրիի երիտասարդության համար և նա ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում կազմակերպության գործունեության և ընթացիկ միջոցառումների կազմակերպչական հարցերում:

«Շումանի կամավորները փոխում են սահմանները»

Հոկտեմբեր 2011- Հունիս 2012, Գյումրի, Հայաստան

Այս ծրագրի նպատակն է խրախուսել առողջ ապրելակերպ Հույս մանկան կենտրոնի և Հայկական Կարիտասի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի երիտասարդներին, և նրանց ազատ ժամանակը դարձնել ավելի արդյունավետ և ստեղծագործական՝ կազմակերպելով արվեստի, մշակույթի դասընթացներ:

Ծրագրի տևողությունը. 9 ամիս

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

Կամավորներ. Ադամ Կովալչուկ, Անդժեի Պոդսիադլիկ

Կամավորների առաջադրանքները. Հույսի սաների ազատ ժամանցի կազմակերպում, ինչպես նաև Հայկական Կարիտասի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի սաների համար սպորտային խաղերի կազմակերպում:

«Դանիական ոգին Գյումրիում»

Հոկտեմբեր 2011- Մարտ 2012, Գյումրի / Հայաստան

Այս ծրագրի գլխավոր նպատակն է բարձրացնել եվրոպական իրազեկությունը և խթանել մշակութային փոխանակումը Գյումրի քաղաքում: Ծրագիրը նպատակաուղղված է եվրոպական քաղաքացիության վերաբերյալ Հայաստանի երիտասարդության գիտելիքների մակարդակի բարձրացմանը: Ծրագրի նպատակներից է նաև տեղական երիտասարդներին ներկայացնել այլ մշակույթներ և քաջալերել նրանց գնահատելու մշակութային տարբերությունները՝ որպես գիտելիքների նոր պոտենցալ բնագավառ ձեռք բերելու միջոց:

Ծրագրի տևողությունը. 6 ամիս

Ծրագրի վայրը. Գյումրի, Հայաստան

Կամավորի անունը Կասպեր Բադսթյու Ջակոբսեն

Կամավորի առաջադրանքները. ԵՆկ անդամների համար կազմակերպել դանիերեն լեզվի և դանիական մշակույթի ակումբներ , Հայկական Կարիտասի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնում պարբերաբար անցկացնել լեզվի դասընթացներ և ծավալել դանիական մշակույթը ներկայացնող աշխատանքներ:

✓ Որակական աջակցության համակարգեր կամավորների համար

«ԵԿԾ մենթորների դասընթաց և ԵԿԾ շնորհանդեսներ»

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն անցկացնում է կանոնավոր դասընթացներ և ԵԿԾ շնորհանդեսներ ներկայիս ԵԿԾ մենթորների և նրանց համար, ովքեր պատրաստվում են դառնալ ԵԿԾ մենթոր: Դասընթացները հիմնականում նախատեսված են ԵՆկ անդամների համար, այնուհետ ընտրվում են լավագույն թեկնածուները: Դասընթացնի նպատակն է ներկայացնել "Երիտասարդությունը Շարժման մեջ" ծրագիրը՝ կենտրոնանալով Եվրոպական Կամավորական Ծառայության վրա՝ ինչպես է այն գործում, ինչպես ընդգրկվել ծրագրում, մենթորների պարտականությունները և իրավունքները և ծրագրային այլ մանրամասներ: Եվ քանի որ մյուս կազմակերպությունները ևս ունեն դասընթացների պահանջ, այդ իսկ պատճառով ԵԿԾ մենթորների դասընթացները բաց են նաև այլ կազմակերպությունների անդամների համար: Դասընթացները անցկացվում են Աննա Եղոյանի օգնությամբ, ով հանդիսանում է Հայաստանում ՍԱԼՏՕ Արևելյան Եվրոպա և Կովկաս Ռեսուրս Կենտրոն-ի բազմապատկիչներից մեկը: Յուրաքանչյուր ԵԿԾ մենթորների դասընթաց նախատեսված է առնվազն 10 մասնակիցների համար:

«Կամավորների միջազգային օր»

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն միջազգային և տեղական կամավորների համար կազմակերպվել էին մի շարք միջոցառումներ կապված նրանց գործունեության գնահատման հետ:

Ի պատասխան Կամավորների Միջազգային Օրվան, Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոնը կազմակերպել էր մի շարք միջոցառումներ՝ ուղղված տեղական և միջազգային կամավորական աշխատանքի խթանմանը: Միջոցառումը սկսվեց 2011թ. դեկտեմբերի 3-ին Գյումրիում անցկացվող "Աղքատությունը Եվրոպական կամավորների աչքերով" շրջիկ ցուցահանդեսի բացմամբ, որին հետևեցին ևս մի քանի միջոցառումներ՝ նվիրված միջազգային կամավորական աշխատանքին :

ԵՆկ Խաղաղության Կորպուսի կամավոր Կիմ Վան Քիրքը ներակայացրեց որոշակի տեղեկատվություն իր ծրագրի և Խաղաղության Կորպուսի վերաբերյալ: Կիմը նաև ակտիվ մասնակցություն ցուցաբերեց՝ աջակցելով միջոցառումների կազմակերպչական հարցերում:

Ցուցահանդեսի բացմանը հետևեց ԵԿԾ մասին շնորհանդեսը:

Ավելի ուշ՝ կեսօրին, անցկացվեց մամլո ասուլիս, և որին ներկա էին ԵՆԿ աշխատակազմի անդամները և միջազգային կամավորները: Մամլո ասուլիսին հետևեց միջազգային ԵԿԾ կամավորների շրջագայությունը քաղաքի տեսարժան վայրերով: Միջոցառումը եզրափակվեց վերադարձած ԵԿԾ կամավորների փորձի գնահատմամբ, ովքեր կիսվեցին իրենց փորձով ներկայիս ԵԿԾ կամավորների հետ:

«Կամավորների միջազգային օրվա տոնումը ԵՆԿ տեղական կամավորների հետ»

Դեկտեմբեր 5, 2011, Գյումրի / Հայաստան

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն Կամավորների Միջազգային Օրը տոնեց՝ շեշտը դնելով տեղական կամավորության վրա՝ գնահատելով ԵՆԿ տեղական կամավորների գործունեությունը:

ԵՆԿ-ի առավել ակտիվ անդամները առաջադրվել էին ԵՆԿ աշխատակազմի կողմից՝ ստանալով ԵՆԿ կամավորների պաշտոնական քարտեր:

Կամավորների քարտերի շնորհանդեսը համալրվեց ԵՆԿ տեղական կամավորների պատմությունների շնորհանդեսներով և երդման արարողակարգով:

✓ Քաղաքացիական ակտիվություն

«Երիտասարդները կարող են փոփոխությունների կատարել» դասընթաց

Սեպտեմբեր 20– Սեպտեմբեր 27, 2010, Գյումրի / Հայաստան

"Երիտասարդները կարող են փոփոխությունների հանգեցնել" դասընթացը անցկացվեց 2009թ-ի սեպտեմբերին Գյումրի քաղաքում, Եվրոպական Հանձնաժողովի "Երիտասարդությունը Շարժման մեջ" շրագրի շրջանակներում լեհական "Ռոբերտ Շուման" Հիմնադրամի աջակցությամբ:



7-օրյա դասընթացի նպատակն էր խթանել երիտասարդների ակտիվ մասնակցությունը տեղական, ազգային և միջազգային մակարդակներով: Դասընթացը երիտասարդ աշխատողներին և երիտասարդ առաջնորդներին տվեց գիտելիքներ, հմտություններ, միջոցներ, որոնք անհրաժեշտ են որոշումների կայացմանը և հասարակական հարաբերություններում երիտասարդների ներգրավվածությունը ապահովելու համար:

Դասընթացին մասնակցեցին 9 երկրներից ժամանած մասնակիցներ, ովքեր կիսվեցին իրենց փորձով, ովքեր ապահովեցին նաև միջմշակութային փոխանակումը:

Դասընթացի հիմնական թեման էր մեդիան: Սկսած դասընթացի ամենաառաջին օրվանից մինչև դասընթացի վերջին օրը մենք հնարավորինս փորձում էինք հետաքրքրություն առաջացնել լրատվամիջոցների հանդեպ: Միջոցառումը եթեր էր հեռարձակվում տեղական տարբեր ալիքներով:

«Անկախ ամեն ինչից կհաղթի ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ» գործնական այց

Դեկտեմբեր 16-19, 2010, Գյումրի – Երևան / Հայաստան

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն "Երիտասարդությունը Շարժման մեջ" ծրագրի շրջանակներում կազմակերպել էր "Անկախ ամեն ինչից կհաղթի Խաղաղությունը" խորագրով գործնական այցը՝ կոնֆլիկտների հաղթահարում թեմայով: Այցը տեղի ունեցավ Գյումրիում դեկտեմբերի 16-19: Այցի նպատակն էր ընդլայնել հետագա երկխոսությունը և հաղորդակցումը երիտասարդների միջև՝ գտնելով հանընդհանուր հետաքրքրություններ, թեմաներ, և կառուցելով երկարատև համագործակցություն ներգրավված կազմակերպությունների միջև, որոնք երիտասարդական աշխատանքի բնագավառում ունեն փորձի տարբեր մակարդակներ: Եռօրյա ծրագրի ընթացքում ԵՆԿ հասարակական կազմակերպության աշխատակազմը Ֆրանսիայի, Հունաստանի և Սերբիայի գործընկերների հետ համատեղ մշակեց ավելի քան 4 ծրագիր և գործողությունների պլան: Այցի վերջին երեք օրվա ընթացքում Ֆրանսիայի, Հունաստանի և Սերբիայի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռնվեց շրջագայել քաղաքի տեսարժան վայրերով, ծանոթանալ հայկական մշակույթի, երաժշտության, պարի, ուտելիքի , սովորությունների և ավանդույթների հետ: Այցի մասնակիցները հայրենիք վերադարձան հիանալի տպավորություններով՝ իրենց հետ տանելով նորանոր ծրագրային գաղափարներ, որոնք կիրականցվեն մոտ ապագայում:

«Բավարար պիցցա բոլորի համար » դասընթաց

Հուլիս 14-20, 2011, Դիլիջան – Երևան/Հայաստան

Համագործակցելով Մեթսի Յունեսկո հասարակական կազմակերպության ֆրանսիական ակումբի հետ Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն "Երիտասարդությունը Շարժման մեջ" ծրագրի շրջանակներում կազմակերպել էր "Բավարար պիցցա բոլորի համար" դասընթացը՝ ուղղված կոնֆլիկտների հաղթահարման և բանակցություններ վարելու հմտությունների զարգացմանը:

Ծրագիրը ֆինանսավորվեց Եվրոպական Հանձնաժողովի կողմից և տեղի ունեցավ Դիլիջանում հուլիսի 14-20: Այս դասընթացը ԵՆԿ-ի մի այլ նախաձեռնության ՝ "Անկախ ամեն ինչից կհաղթի Խաղաղությունը " գործնական այցի արդյունքն էր, որը անցկացվեց 2010թ. դեկտեմբերին: Ծրագրի խնդիրն էր երիտասարդների միջև կիսել խաղաղության մշակույթը՝ հնարավորություն ընձեռելով կիսելու խաղաղության կերտման և միջսահմանային երկխոսության փորձը:

7 օրյա դասընթացը նվիրված էր հակամարտող գոտիների երիտասարդների բանակցություններ վարելու հմտությունների զարգացմանը:

Տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև հաղորդակցության զանազան ուղիներ ապահովելու և կարծրատիպերը կոտրելու համար դասընթացի թիմը և դասընթաց վարողները օգտագործում էին տարբեր ինտերակտիվ մեթոդներ : Ավելին , դասընթացը խթանում էր միջսահմանային երկխոսությունը և համագործակցությունը: Հայաստանում անցակցրած ժամանակահատվածում 17 երկրներից ժամանած 36 մասնակիցներին հնարավորություն ընձեռնվեց ծանոթանալ հայկական մշակույթին, հայկական ավանդական պարերին, հայկական երաժշտությանը և հայկական խոհանոցին: Նրանց նաև, հնարավորություն ընձեռնվեց մի ամբողջ օր անցկացնել Երևանում:

Միջմշակութային Ուսուցում

✓ Մշակութային իրազեկություն

Միջազգային ակումբ

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ի Միջազգային Ակումբը գործում է դեռևս 2011թ. փետրվար ամսից: Միջազգային ակումբի գլխավոր նպատակն է բարձրացնել Գյումրիի երիտասարդների և շրջական համայնքների միջմշակութային իրազեկության մակարդակը::

ԵՆԿ Միջազգային Ակումբը իր նպատակներին հասել է հետևյալ գործողությունների միջոցով.

- պատմության և աշխարհագրության ակումբ և մշակութային առանձնահատկություններ;
- խոհանոց;
- ամփոփիչ մշակութային միջոցառում:

9 ամիսների ընթացքում ծավալած գործունեության ընթացքում Միջազգային Ակումբը կազմակերպել է երեք կարևոր միջոցառում՝ նրանից յուրաքանչյուրը կենտրոնանալով մի երկրի վրա՝ Հայաստան, Լեհաստան, Գերմանիա:

Մշակութային իրազեկության մակարդակը բարձրացնելու համար կազմակերպված գործողությունները անցկացվում էին հիմնականում համաձայն վերը նշված Ֆորմատին: Ակումբի գործունեությունը ֆինանսավորում են տեղական շահառուները և համապատասխան երկիրը ներկայացնող դեսպանատունը:

«Անվերջ Բազար» ֆոտո-ցուցահանդես

Մայիս 19 - Հունիս 01 2009, Գյումրի / Հայաստան

"Անվերջ Բազար" արվեստի ծրագիրը անցկացվեց "5-րդ հարկ" մշակութային խմբի, ԵՆԿ ոչ-ֆորմալ խմբի, Երևանում Գերմանիայի Դեսպանատան, ԿԱԶԱ Շվեյցարիա-Հայաստան հիմնադրամի համագործակցությամբ:

Ծրագիրն իրականացվեց "Գերմանական շաբաթներ Հայսատանում" ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր նպաստել միջմշակութային երկխոսությանը և ներկայացնել հայ հասարակությանը Գերմանական ժամանակակից արվեստը՝ տարածելով բազմամշակույթ հասկացությունը Հայաստանի մարզերում մասնավորապես, Գյումրիում և Վանաձորում: Ծրագրին ներգրավված էին երիտասարդ կամավորներ և վերը նշված խմբերի և կազմակերպությունների անդամները:

14 օրվա ընթացքում ծրագիրը հյուրընկալեց մի շարք վավերագրական ֆիլմերի հեղինակ գերմանացի նկարիչ Հարալդ Շլութիգին: Ֆոտոլրագրողը ցանկություն հայտնեց Գյումրիում կազմակերպել ցուցահանդես, որի ընթացքում նա հնարավորություն կունենար ցուցադրել Աֆղանստանի Քաբուլ քաղաքում իր լուսանկարած ֆոտոնկարերը:

Գերմանիայի դեսպանի և ԶԼՄ-ների նեկայությունը ցուցահադեսի բացմանը արդեն իսկ մեծ հաջողություն էր ծրագրի համար: Ծրագրի 14 օրը անցան հագեցած. դրանք լի էին հարցազրույցներով, երիտասարդների հետ կազմակերպված հանդիպումներով: Թղթի արվեստի՝ օրիգամիի աշխատանքային հանդիպումներ անցկացվեցին Գյումրիում և Վանաձորում, որոնք հետագայում սկսեցին օգտագործվել որպես ծրագրի գնահատման մեթոդ:

«Օտարականը փառատոնը»

Սեպտեմբեր 05 – Սեպտեմբեր 12 2009, Գյումրի / Հայաստան

Հետևելով Եվրոպայի մշակութային հիմնադրամի նախաձեռնությանը՝ “Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն” ՀԿ-ն և “5-րդ հարկ” մշակութային խումբը Գերմանիայի Դաշնային Հանրապետության աջակցությամբ Գյումրիում իրականացրեց “Օտարականը” ֆիլմ փառատոնը:

Ծրագրի նպատակն էր նպաստել միջմշակութային երկխոսությանը և տարածել բազմամշակույթ հասկացությունը Գյումրու պատանիների միջև:

7-օրյա փառատոնի ընթացքում Գյումրիի Գեղարվեստի ակադեմիայում ցուցադրվեցին ամբողջ աշխարհի երիտասարդների կողմից պատրաստած հազարավոր տեսահոլովակներից լավագույնները: Ընտրված տեսահոլովակները իրենցից ներկայացնում էին երիտասարդների երազանքների, մտավախությունների և մեզանից յուրաքանչյուրին ուղղված հարցերի լավագույն պատկերում: Աշխարհի տարբեր ծայրերից ընտրված տեսահոլովակները մի սերունդ բնութագրող դրվագներ էին:.

Ծրագրից առաջ և ծրագրի ողջ ընթացքում ծրագրի համակարգողը, ծրագրի պատասխանատուն և ծրագրում ներգրավված կամավորները հարցազրույցներ էին տալիս տեղական ռադիո- և հեռուստաալիքներին: Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանատան մշակութային բաժնի պատասխանատու Սոֆի Բոհմը բացեց ցուցահանդեսը՝ հյուրընկալելով 80-ից ավել մարդկանց և որը եթեր հեռարձակվեց տեղական հեռուստաալիքներով:.

Ծրագրի 7 օրերի ընթացքում ցուցահանդեսը յուրաքանչյուր օր հյուրընկալում էր 20-25 այցելուների: Նրանց գերակշռող մասը պատանիներ էին:

«Մենք կարող ենք: Մենք դա կանենք բոլորս միասին» առցանց մշակութային փոխանակում

Ծրագրի նպատակն է խթանել մշակութային փոխանակումը, ինչպես նաև կապ հաստատել Հայաստանի և Ադրբեջանի երիտասարդների միջև՝ խրախուսելով ընկերական հարաբերությունների հաստատումը: Ներկայումս հաղորդակցության պակաս է նկատվում հայերի և ադրբեջանցիների միջև անցյալի հակամարտությունների պատճառով, որի արդյունքում երկու ազգերի միջև չկա ոչ մի կապ, չկա ըմբռնում և ամենակարևորը չկա միմյանց նկատմամբ վստահություն:

Ծրագրիրը, հաղիսանալով Հայաստանի և Ադրբեջանի միջև սառույցը կոտրելու միջոց, հնարավորություն կընձեռնի միջմշակութային հաղորդակցման և մշակութային փոխանակման համար և կխթանի այս երկու երկրների միջև փոխըմբռման հաստատմանը՝ հույս ունենալով մեզ ցույց տալ ոչ միայն մեր տարբերությունները, այլև մեր ընդհանուր գծերը , որոնք ունեն Կովկասի ազգերը, այդ թվում նաև մեր հարևանները :

Մեզանից յուրաքանչյուրը կարող է մասնակցել. մենք կարող ենք: Մենք կանենք դա բոլորս միասին: Հայսատան-Ադրբեջան առցանց մշակութային փոխանակման ծրագրին կարելի է հետևել www.arm-az-exchange.ucoz.com կայքում՝ նախապես գրանցվելով համապատասխան ինտերնետային էջում:

Մենք Կարող ենք. մենք դա կանենք միասին" ծրագիրը իրականացվում է "Ներգրավվենք" ծրագրի շրջանակներում՝ ԵՎրասիաՀամագործակցության Հիմնադրամի, Թեոդոր ՀեուսԿոլլեգի, Ռոբերտ Բոշի հիմնադրամի, ՄիտՕսթ Հիմնադրամի, Գերմանիայի դաշնային արտաքին գրասենյակի և Մշակութային հարաբերությունների արտաքին ինստիտուտի կողմից:

✓ Լեզվական հմտությունների զարգացում

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն իրականացնում է տարաբնույթ գործունեություն՝ ուղղված անդամների լեզվական հմտությունների զարգացմանը:

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոնը ԵԿԾ-ի, Խաղաղության Կորպուսի և տեղական կամավորների օգնությամբ անդամների համար անցկացնում է տարբեր լեզուների ակումբներ: 2011թ. ընթացքում յուրաքանչյուր ամիս մոտավորապես 80 երիտասարդներ այցելում էին ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն, թուրքերեն, դանիերեն և գերմաներեն լեզուների ակումբները:

Արվեստ և Լրատվամիջոց

✓ Արվեստի խթանում

Արվեստի Սեմինար

Ավստրիայի "Միջմշակութային կենտրոնը", համագործակցելով Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ի և Վարշավա քաղաքի հետ, կազմակերպեց երկօրյա սեմինար, որը անցկացվեց Գյումրիում 2010թ. հոկտեմբերի 16-ին և 17-ին Տրանսկովկասիա 2011 ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր խրախուսել երիտասարդների ստեղծագործական ոգին՝ ցույց տալով երիտասարդների ստեղծագործական աշխատանքի և գեղարվեստական արտահայտման հնարավորությունները և խրախուսելով նրանց բնակության վայրի կյանքի հանգամանքների արտացոլումը: Այս նպատակով նրանք օգտագործում էին երիտասարդների առօրյա կյանքում օգտագործվող մի հասարակ գործիք՝ նրանց հեռախոսները կամ ֆոտոխցիկները: Ծրագրի գաղափարն էր ցույց տալ որ գեղարվեստական արտահայտումը կախված չէ սարքավորումներից և երիտասարդներին խրախուսել մասնակցել և իրենց աշխատանքները ցուցադրել Տրանսկովկասիա միջազգային մրցույթում:

Երկօրյա սեմինարների ընթացքում մասնակիցները իրենց ուսուցիչների օգնությամբ նկարահանեցին 9 կարճամետրաժ ֆիլմեր:

Բացօթյա «Կինոթատրոն»

Այս նախաձեռնության նպատակն էր փոփոխություններ մտցնել երիտասարդների միապաղաղ կյանքում՝ կազմակերպելով երեկոյան ժամերին բացօթյա կինոնկաների ցուցադրում:

Այս նախաձեռնությունը իրականացվեց օգոստոս ամսվա ընթացքում: Մենք կազմակերպեցինք ընդհամենը երկու կինոդիտում՝ ստիպված լինելով դադարել մեր բացօթյա կինոթատրոնի գործունեությունը վատ եղանակի պատճառով:

Առաջին կինոնկարի թեման որոշել էին ԵՆԿ ՀԿ աշխատակազմը, իսկ երկրորդ կինոնկարի թեմայի ընտրությունը կատարվեց մեր կազմակերպության անդամների կողմից:

Անվճար բացօթյա կինոթատրոնը իր գործունեությունը կվերսկսի ամռանը:

✓ Աջակցենք երիտասարդ արվեստագետներին

«Գունավոր Եվրոպա»

Երիտասարդական նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն միշտ էլ աջակցել և գնահատել է ստեղծագործ երիտասարդներին: “Գունավոր Եվրապա”-ն մի խումբ երիտասարդների նախաձեռնություններից մեկն էր: Ծրագրի նպատակն էր Եվրոպան դարձնել ավելի մոտ և հասանելի երիտասարդությանը: ԵՆԿ տրամադրեց տարածք՝ սենյակ այն երիտասարդներին, ովքեր վերանորոգեցին այն Երիտասարդական Բանկի օգնությամբ:

Պատին նկարած Եվրոպայի քարտեզը սենյակին հաղորդում է Եվրոպական մթնոլորտ: Սենյակը կհյուրընկալի տարբեր լեզուներ և մշակութային ակումբներ: Այն նաև կունենա Եվրոպական ակումբ, որը տեղեկատվություն կտրամադրի զանազան եվրոպական կառույցների վերաբերյալ և երիտասարդների համար կբացահայտի այն բոլոր հնարավորությունները, որոնք ընձեռնում են եվրոպական կառույցները:

«FrOZen» /սառեցված/ և «Լրագրողներ» փոխանակման ծրագրեր

“FrOZen” ծրագիրը իրականացրեց Ստամբուլի Koza Վիզուալ կազմակերպության և Գյումրիի “5-րդ հարկ” Մշակութային Խմբի հետ: Ծրագրի նպատակն էր խրախուսել միջմշակութային երկխոսությունը Հայաստանի և Թուրքիայի համայնքների միջև: ԵՆԿ աջակցեց ծրագրին տեխնիկական հարցերով:

***

8 լրագրողներից բաղկացած խումբը Հայստան այցելեց 2011թ-ի Հունիսի 27-ից Հուլիսի 3-ը “Հայաստան-Թուքիա Լրագրողների Երկխոսություն” ծրագրի երրորդ տարում: Ծրագիրը կազմակերպել էր Հրանտ Դինք Հիմնադրամը Հայնրիխ Բյոլ Հիմնադրամի Թուրքիայի գրասենյակի համագործակցությամբ: .

Այցի ընթացքում Գյումրիի ԵՆԿ հասարակական կազմակերպությունը խմբի համար կազմակերպել էր հատուկ հանդիպում՝ հրավիրելով ԵՆԿ անդամներին և երիտասարդներին, ովքեր կիսվեցին իրենց հեռանկարներով Հայաստանի, 1988թ-ի երկրաշարժի, կամավորության և երիտասարդական ակտիվության վերաբերյալ:

Կրթություն

✓ Անհատական զարգացում

Բիզնես հմտությունների զարգացման դասընթացներ

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն Խաղաղության Կորպուսի կամավորներ Ամանդա Պասկալի և Կիմ Վան Քիրքի համագործակցությամբ 2010-211 թթ. ընթացքում ԵՆԿ անդամների համար կազմակերպեց բիզնես հմտությունների զարգացման դասընթացներ : Յուրաքանչյուր դասընթացին ներկա էին մոտավորապես 10-15 երիտասարդ:

Դասընթացը բաղկացած էր հետևյալ բաժիններից.

-էլ-փոստերի նպատակի և էթիկայի վերաբերյալ սեմինարներ;

-ինչպես գրել ինքնակենսագրական /CV/, շարժառիթային նամակներ;

-ինչպես պատրաստվել աշխատանքային հարցազրույցի:

Այս դասընթացները անցկացվեցին ԵՆԿ անդամների բիզնես հմտությունները զարգացնելու համար : Դասընթացները շատ արդյունավետ էին և օգտակար:

Այլ ծրագրեր

«Թող Արեգակն ավելի պայծառ շողա»

“Թող Արեգակն ավելի պայծառ շողա” ծրագիրը տեղի ունեցավ 2011թ-ի հունիսի 16-ին և 17-ին: Այս երկօրյա միջոցառումը կազմակերպվել էր Գյումրիում հաշմանդամ երեխաների Արեգակ խնամքի կենտրոնին աջակցելու համար: Արեգակ կենտրոնը ամբողջ Հայաստանում միակ ցերեկային կենտրոնն է:

Հայաստանի IREX, Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ի, և Հայկական Կարիտասի աջակցությամբ հնարավոր դարձավ կազմակերպել կենտրոնում մի մեծ միջոցառում հաշմանդանամ երեխաների համար: Ծրագիրը ֆինանսավորվեց IREX Ծրագրայի Ժպիտ ծրագրի կողմից: Ծրագրի իրականացման համար մեծ ներդրումներ ունեցան նաև ԵՆԿ և հայկական Կարիտասը:

Միջոցառումը սկսվեց հունիսի 16-ի երեկոյան: Մասնակիցները, օգտագործելով պրոյեկտորներ, հեքիաթների հերոսներին ուրվագծում էին պատերին: Էսքիզները ուրվագծեցին Գյումրիի հմուտ նկարիչները: Միջոցառմանը ներգրավված էին 5-6 նկարիչ, ովքեր հաջորդ օրը օգնեցին երեխաներին, կամավորներին և հրավիրված հյուրերին ներկել էսքիզները: Միջոցառման երկրորդ օրը կենտրոնում ծրագրին մասնակցելու և իրենց ներդրումն ունենալու համար հավաքվել էին ավելի քան 60 երիտասարդ: Ոմանք կանաչապատում էին բակի տարածքը, իսկ մյուսները՝ ներկում պատը: Միջոցառումը մեծ հաջողություն էր նախ և առաջ կենտրոնի հաշմանդամ երեխաների համար: Այս ծրագրի ընթացքում նրանք աշխատում էին այլ երեխաների և չափահասների հետ միասին, և նրանք ունեցան իրենց սեփական ներդրումը իրենց բակի բարելավման և պատերի պայծառեցման գործում:

«Երիտասարդական Երազանքների գիշեր»

Գյումրու Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն կազմակերպել էր “Երազանքների իրականացման գիշեր” նախաձեռնությունը նվիրված եվրոպական երիտասարդության շաբաթին: Միջոցառումը բաղկացած էր երկու

մասից, որոնցից առաջինը դասընթաց էր, դրիմվայթներ պատրաստելու վերաբերյալ: Իսկ երեկոյան, երբ դրիմվայթները պատրաստ էին, մասնակիցները երազանքներ պահեցին և դրիմվայթները ուղղարկեցին դեպի երկինք:

«Երկրագնդի ժամ»

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն Գյումրիում կազմակերպել էր “Երկրագնդի Ժամ” միջոցառումը:

“Երկրագնդի Ժամ” միջոցառումը ջանք չխնայեց շրջակա միջավայրի պահպանման խնդիրների վերաբերյալ մարդկանց իրազեկության մակարդակը բարձրացնելու համար:

Օրվա ընթացքում, ԵՆԿ անդամները բաժանեցին թռուցիկներ և պաստառներ Երկրագնդի ժամվա մասին, որոնք մարդկանց կոչ էին անում մի ժամով անջատել էլեկտրականությունը:

Միջոցառումը ոչ միայն մարդկանց կոչ էր անում գոնե տարին մի անգամ մեկ ժամով անջատել էլեկտրականությունը, այլև այն հավաքվել միասին և մեր մոլորակի համար կերտել ավելի լավ ապագա:

«Թղթե ինքնաթիռներ խաղաղության համար»

Ազատություն ծրագիրը օգտագործում է թղթե ինքնաթիռներ՝ որպես դեպի խաղաղություն տանող արահետի խորհրդանիշ:

Խաղաղության կորպուսի կամավոր Ամանդա Պասկալի օգնությամբ, ԵՆԿ-ն Գյումրու երիտասարդների հետ միասին կազմակերպեց մի գեղեցիկ մջոցառում: Պատրաստվեցին թղթե ինքնաթիռներ, որի մի թևի վրա գրվեց հետևյալ երեք վիճակագրական տվյալները՝ ամեն տարի 600,000 - 800,000 մարդկ գերի են վերցվում և տեղափոխվում միջազգային սահմաններով; Հիմա ամողջ աշխարհով մեկ կա առնվազն 10 միլլիոն ստրուկ; Մարդկության ամբողջ պատմության մեջ հիմա աշխարհում կան ավելի շատ ստրուկներ քան երբևէ :

Իսկ մյուս թևին, գրվեց մի հաղորդագրություն, որտեղ արտահայտվեց ստրկության զոհերին ազատելու հույսը:

Նկարահանվել էր տեսահոլովակ, որը հետագայում եթեր հեռարձակվեց CNN հեռուստաընկերությամբ:

Միջազգային ծրագրեր ԵՆԿ գործընկերների հետ

ԵՆԿ անդամները եզակի հնարավորություն ունեցան մասնակցել տարբեր մջազգային համագործակցության ծրագրերի և ներկայացնել ԵՆԿ-ն և Հայաստանը արտասահմանում: Ողջ տարվա 2011թ ընթացքում 27 երիտասարդներ մասնակցեցին միջազգային ծրագրերի:

ԵՆԿ-ն մյուս անդամների համար կազմակերպել էր շնորհանդես, որի ընթացքում միջազգային ծրագրերին մասնակցած անդամները ներկայացրեցին այդ ծրագրերը:

Ֆլեշմոբեր

ԵՆԿ կազմակերպել է զանազան ֆլեշմոբեր:

Մարդկային ռեսուրսներ

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն անդամության սկզբունքի վրա հիմնված կազմակերպություն է: Հայաստանի քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները իրավունք ունեն դառնալ ԵՆԿ անդամներ, եթե լրացել է նրանց 1ւ տարին: (մինչև 16 տարեկան երիտասարդները կարող են դառնալ ԵՆկ անդամներ միայն ծնողների թուլտվությամբ):

Ըստ 2011թ. Դեկտեմբերի ցուցանիշների՝ ԵՆԿ ունի 244 լիիրավ անդամ, 21 կամավոր, աշխատակազմի 9անդամ և 5 միջազգային կամավոր, նրանց թվում են ԱՄՆ Խաղաղության Կորպուսի և Եվրոպական Կամավորական Ծառայության կամավորները:

ԵՆԿ-ի տեղական և միջազգային ծրագրերին մասնակցելու նախապատվությունը տրվում է ԵՆԿ անդամներին և կամավորներին: Կազմակերպությունը, աջակցելով անդամներին, նրանց հնարավորություն է ընձեռնում իրականացնել իրենց նախաձեռնությունները, որն ավելի է նպաստում թիմի ամրապնդմամը և անդամների ներդրումների ճանաչմանը: Մինչև հիմա կազմակերպության անդամաների նախաձեռնությամբ տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

Արշավ Արագածի գագաթ

Հելոին

Տաղանդ Շոու և Աստղային միջոցառում

- Անդամների և կամավորների հետ հոտնոռղական հետադարձ կապը ապահովելու և ուժեղացնելու, ինչպես նաև որոշումների կայացման գործում մեր անդամների մասնակցությունը ապահովելու համար անցկացվում են հետևյալ միջոցառումները.
- ԵՆԿ ընդհանուր ժողով;
- Ամենամսյա ժողով անդամների հետ;
- Կանոնավոր ժողովներ կամավորների հետ;
- Նոր անդամների համար ԵՆԿ ներածական դասընթացներ:

Երիտասարդության Համար
Երիտասարդության Հետ
Երիտասարդության Կողմից